

նահանգի ըսուեցան : Ֆրանքլին ութը տարի ան փառաւոր պանդխտութիւն ընելէն վերջը 1785ին մեծ յաղթանակով իր հայրենիքը դարձաւ . քաղաքացիները ուրախութեամբ ընդունեցան զինքը , և իրենց նոր հասարակապետութեանը ժողովին նախագահ ըրին : Այսպիսի փառքով մեռաւ Ֆրանքլին 84 տարեկան՝ 1788ին , և բուր երկրին բնակիչները երկու ամիսի չափ սուգ մտան իրեն համար . կենդանագրին տակն ալ աս խօսքերը գրեցին .

«Յամպոց կորզեաց սա ըզանթիս կայծականց ,  
Եւ զգաւազան յանագորոյն ՚ի բըռանց » :

Ֆրանքլին շատ տեսակ մանր գրուածքներ ունի , ամէնն ալ այնպիսի զուարճալի՝ ընտանի ու խելացի ոճով , որ կարդալ սկսողը առանց լմընցընելու չկրնար ձեռքէն ձգել , և առանց խելք սորվելու անոր խօսքերէն՝ չկրնար գիրքը գոցել : Այս պզտիկ գրուածքներէն մէկը հայերէն տպուեցաւ մօտ տարիներս Սկիւտար՝ աշխարհաբառ գեղեցիկ թարգմանութեամբ ու տպագրութեամբ , մէկալներուն ալ ճաշակը աս օրագրիս մէջ կուտանք :

Օ անգաղապտուններու վերայ :

Թիեօֆիս որոշ չգիտցուիր թէ արդեօք հիները որ ատենէն սկսած են զանգակ բանեցընել , բայց աս յայտնի է որ ժողովուրդը ժամ հրաւիրելու համար չէին գործածեր . ուստի և ոչ զանգալատուն կար , ու Ալբրուպայի մէջ առջի անգամ Ստալիայի Վամպանիա ըսուած գաւառը գործածուեցաւ չորրորդ դարուն մէջ , և անկէ վերջը սկսաւ ուրիշ տեղուանք ալ , այսինքն Վաղղիա , Վերմանիա և ուրիշ աշխարհքներ : Այլ որովհետեւ զանգակը կը գործածուի հեռու տեղ ձայն տալու համար , ան պատճառաւ բարձր տեղ կը կախեն , և ասոր համար շի-

նուած են զանգալատունները :

Օ անգալատուններուն ձևը , բարձրութիւնն ու մեծութիւնը շատ տեսակ կրնայ ըլլալ . բայց ասոնց դիրքը ընդհանրապէս վեց տեսակ է :

Ա . Օ անգալները ժամուն գմբեթին մէջ կը կախեն , աս կերպը հին է , անոր համար ալ խիստ քիչ կը գտնուի հիմա :

Բ . Օ անգալատունը անմիջապէս ժամուն դրան վրայ կը շինեն . աս կերպով շինած շատ կը գտնուի գոթացի ճարտարապետութեամբ շինած եկեղեցիներուն վրայ : Անուանի է աս կողմանէ Ֆրիպուրկի մայր եկեղեցին , որ ինչուան իրեն բարձրութեան իրեք մասը քառակուսի է և անկէ վերջը սրածայր :

Գ . Ամուն ճակտի երկու անկիւնները մէյմէկ զանգալատուն կը շինեն : Այս ձևս ալ շատ կը գտնուի գոթացի ճարտարապետութեամբ շինուած եկեղեցիներուն մէջ , ինչպէս է նաև Սեսթմիսթրի եկեղեցւոյնը :

Դ . Ամուն չորս անկիւնները մէյմէկ զանգալատուն շինել : Այսիկայ թէպէտ և ահաւոր ու վսեմ բան կ'ըլլայ , բայց բերդի ձև առնելուն համար՝ այնչափ ժամու չվայլեր . և աս ձևը հիմա միայն անգղիացւոց եկեղեցիներուն վրայ կը գտնուի :

Ե . Օ անգալատունը ժամէն բուրովին զատ շինել . ասիկայ մասնաւոր կերպով իտալացւոց սովորութիւն է : Այս տեսակ զանգալատուններուն մէջ երևելի են , Փիզայինը , Ֆիորենցայինը , ու Սենտկինը : Անուանի է նաև Վրեմնայի զանգալատունը , որ Ստալիայի մէջ ամենէն բարձրն է , և կ'ըսեն թէ ութերորդ դարուն մէջ շինուած է :

Զ . Օ անգալատունը ժամուն մէկ անկիւնը շինել , ինչպէս շատերը աւանդատան քովը կը շինեն . ասիկայ է հիմակուան սովորական կերպը թէպէտ և ասով շէնքը քիչ մը տձև կ'երևնայ :



Սիջին դարու ատենները իւրաքան չիւր քաղաք իրեն մեծ պարծանք կը սեպէր մեծ ու բարձր զանգակատուններ ունենալը : Հիմա բոլոր զանգակատուններուն մէջ ամենէն բարձրը Սթրասպուրկի մայր եկեղեցւոյն զանգակատունն է , որ դրսուանց ալ վերէն 'ի վար զարդարուն է :

Խիստ անուանի է Ս Եննայի սրբոյն Ստեփաննոսի զանգակատունը իրեն ձևին ու զարդերուն աղուորութեանը համար . և որովհետև հոս պատկերը կը դնենք՝ անոր համար քիչ մը աւելի ընդարձակ խօսինք ասոր վրայ :

Ըս եկեղեցին Ս Եննայի հրապարակներէն մէկուն մէջ շինած է , չորս դին ալ մեծամեծ շէնքերով զարդարուած . ժամը գոթացի ճարտարապետութեամբ է , ճակատը մարմարիունէ արձաններով զարդարած , որ ժամանակ անցնելով սևցած են : Եւ մոն արևելեան կողմը շինած է զանգակատունը՝ Սթրասպուրկի զանգակատան ձևովը , թէպէտ և անկէ շատ աւելի ցած է . և բարձրութիւնն է 434 ոտք գերմանական : Ըս զանգակատունը զգալի կերպով դէպ 'ի հիւսիսային կողմը ծռած է , բայց ինչ պատճառէ ծռիլը չիմացուիր : Ըս աշտարակին մէջ մեծ զանգակ մը , կայ որուն միայն լեզուն 300 լիպրէ կը կշռէ : Ըս զանգակը ( Յովսէփ կայսրը թափել տուեր է ան թնդանօթներէն որ ( ) սմանցիք Ս Եննա քաղաքը պաշարելէն ետքը հոն թողեր փախեր էին Գարա Սուսաֆա փաշային հետ 1683ին : Եւ մոն ճակատը երկու ուրիշ պղտի աշտարակներ կան : Եկեղեցւոյն հարաւային կողմը երկրորդական դուռ մը կայ , որուն քովը 1451ին 'ի վեր քարէ ամպիոն մը կայ , և սուրբ Յովհան Կապիստրանոս անոր վրայ ելած ժողովրդեան քարոզ կուտայ եղեր , որ ժամուն մէջը չարղմելով հրապարակը կը կենային :

Եկեղեցւոյն ներսի կողմը անանկ երևելի բան մը չկայ , և բնական սևութիւնն ու մթութիւնը գոյն

զգոյն պատուհաններուն ու սպակիներուն պատճառաւ ահաւոր տեսք մը ունի : Թէպէտ և մէջը շատ գերեզմաններ կան , բայց երևելի են մէյմը փեղերիկոս Դ . կայսեր գերեզմանը , մէյմըն ալ Եւգինէոս Սաւոյացի զօրավարինը :

Օ անգակատուններու վրայ խօսածնիս ամբողջացնելու համար ասիկայ ալ յիշատակի արժանի բան է՝ որ քանի մը անձինք մեքենական հրնարքներով զանգակատուններ տեղէ տեղ տարին , ինչպէս Ս Քրիստոտէլ Սպպերթի անունով իտալացի մը որ 35 քայլ տեղ տարաւ զանգակատուն մը մէջի զանգակներովը 16 երորդ դարուն մէջ : Սէյմ ալ 1776ին Սերրա անունով իտալացի մը երկու մեթրէն աւելի տեղ փոխադրեց զանգակատուն մը՝ որ 21 մեթրէն աւելի բարձրութիւն ունէր , և ան միջոցին Սերրային տղան ալ մէջը կեցած՝ զանգակները կը զարնէր : Ըս Սերրան կարգացող մարդ չէ եղեր , և միայն իր բնական հանձարովը երևելի մեքենագէտ եղեր է :

ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌԱՋԱԿԻՄՈՒԹԻՒՆ

Ս ան Գ ' .

ԸՅՍՊԻՍ ուրեմն երեք են , որք ցարդ խոչընդոտն եղեն գեղեցիկ զարգացման ազգիս . այսինքն են ապշութիւն մտաց , աղքատութիւն և օձտումն եղբարց յիրերաց : Ըպաքէն զուր ջան և անարդիւն վաստակ է դարձեալ կեղակարծ մտօք ձեռն մխել 'ի փորձ զարգացման ազգիս՝ չև զառաջս կալեալ և 'ի սպառսպուռ բարձեալ 'ի միջոյ գերեսին զայսոսիկ զխափանարարս ուսման և արուեստից և քաղաքականութեան :

Սակայն եթէ ոք ընդդէմ բանս եղեալ ասասցէ , թէ և արդ յազգի մերում տեսանի ոչ սակաւ յառաջա

1 Յես երես 281 :